ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Երևան, 29 ապրիլի 2021թ.

ՀՅԴ ՀԱՅ ԴԱՏԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀՅԴ ԲՅՈՒՐՈՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ
ՊԱՐՈՆ ՀԱԿՈԲ ՏԵՐ-ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Խաչատուրյան,

Ապրիլի 24-ին ԱՄՆ նախագահ Ջո Բայդենը, հավատարիմ մնալով իր համոզմունքներին և խոստումներին, բարձր գնահատելով ամերիկահայ համայնքի ներդրումը ԱՄՆ զարգացման և բարգավաճման գործում, Մեծ Եղեռնը պաշտոնապես անվանեց ցեղասպանություն:

ԱՄՆ նախագահին ուղղված առանձին նամակում ողջունել եմ նրա հայտարարությունը, շնորհակալություն հայտնել վեհանձն և շիտակ կեցվածքի համար:

Արձանագրելով, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համար կարևոր նշանակություն ունեցող այս հայտարարությունը տասնամյակներ շարունակ ՀՅԴ ԱՄՆ մարմինների, Հայ դատի հանձնախմբերի, գրասենյակների և բյուրավոր նվիրյալների ջանքերի անուրանալի արգասիքն է, ցանկանում եմ Ձեր միջոցով շնորհակալություն հայտնել ՀՅԴ Հայ դատի կենտրոնական խորհրդին, Հայ դատի պատասխանատուներին, բոլոր գրասենյակներին, հանձնախմբերին, անհատներին՝ համահայկական օրակարգին հավատարմության, Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացին ցուցաբերվող աջակցության համար:

Տարիների ձեր ջանադիր գործունեությունն իր ծանրակշիռ նպաստն է ունեցել նաև 2019 թվականին ԱՄՆ Կոնգրեսի զույգ պալատների կողմից Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձևի ընդունման մեջ, որը կարևոր հանգրվան էր Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործում:

Այն հետևողական աշխատանքը, որ ՀՅԴ-ն կատարում է Սփյուռքում և հատկապես ԱՄՆ-ում ազգապահպանության ու համազգային նպատակների իրականացման ուղղությամբ, արժանի է մեծագույն հարգանքի և գնահատականի:

Վստահ եմ, որ այսուհետ ևս շարունակելու եք առաջնորդվել համազգային շահով և արդարությունը վերջնական հանգրվանին հասցնելու դժվարին առաքելության խորին գիտակցումով: Անցնելիք ճանապարհը դեռ հանգեցնելու է նաև այլ հաջողությունների՝ ի շահ համայն հայության, Հայաստանի, Արցախի և Սփյուռքի:

Հարգանքով՝

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ